2017թվականի մարտի 07-ը

**Հարգելի սպառող,**

**Խնդրի նկարագրում**

Բաքստեռ Հելթքեյա Քորպորեյշնը ("Բաքստեռ» Ընկերութուն ՓԲԸ-ի միջոցով) տեղեկացնում ուղղիչ գործողության մասին՝ «Prismaflex» ծրագրային ապահովման մեկնակերպի նորոգման նպատակներով: "Բաքստեռ» Ընկերութունը ստացել է հաղորդագրություններ այն մասին, որ բժշկական արտադրատեսակի սպառողները չեն պահպանում "Prismaflex" մեկանգամյա սեթերի անվտանգ բեռնաթափման հրահանգի պահանջները: Այդ գործողությունները անհրաժեշտ են հիվանդի անվտանգ անջատման համար սեթի բեռնաթափումից առաջ բուժական ընթացակարգից հետո: Այս պահանջները չկատարելու դեպքում հնարավոր է արյան մեծ քանակության կորուստ և մահացու վերջ:

**Բժշկական ապրանքը, որի նկատմամբ իրականացվում է շտապ ուղղիչ գործողություն**

| Ապրանքի ծածկագիրը | Բժշկական ապրանքի անվանումը | Սերիական համարը |
|---|---|---|
| 114870 | Prismaflex 7.XX | PA17262 |

Ծանոթագրություն. Prismaflex-ում ծրագրային ապահովման 8.10 մեկնակերպում անվտանգության այդ առանձնահատկությունները արդեն իսկ նախատեսված են, և դրանք արդիականացման կարիք չունեն բժշկական ապրանքի նկատմամբ ուղղիչ գործողության սույն շրջանակներում:

**Ռիսկի նկարագրությունը**

Մեկանգամյա սեթի բեռնաթափումը առանց հրահանգի պահպանման և «Prismaflex»-ում ռազնապի ազդանշանի հայտնվելու դեպքում կարող են հանգեցնել արյան մեծ քանակության կորուստի և հնարավոր մահացու վերջին:

**ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒ՝Մ**

**Մեկանգամյա սեթի բեռնաթափումը կամ դուրս հանումը միացրած հիվանդի դեպքում հանգեցնում է արյան լուրջ կորուստի: Միշտ անջատեք հիվանդին մեկանգամյա սեթից մինչև «Prismaflex»-ից մեկանգամյա սեթի բեռնաթափումը կամ դուրս հանումը:**

2012 թվականից Baxter ընկերությունը ստացել է հաղորդագրություններ այս խնդրի հետ կապված վեց լուրջ խախտումների և հիվանդների հինգ մահերի մասին:

**Baxter ընկերության կողմից ձեռնարկված գործողություններ, ուղղված խնդիրների կրկին ծագումը կանխելու նպատակով**

Ուղղելով սույն նամակը, Բաքստեռ ընկերությունը տեղեկացնում է սպառողներին այն մասին, որ «Prismaflex» բժշկական ապրանքը հագեցած է հատուկ առանձնահատկություններով բուժական ընթքցակազը կատարելուց հետո մեկանգամյա սեթի բեռնաթափումից առաջ հիվանդի անվտանգ անջատման նպատակով: հատուկ հրահանգներում, ներկայացված շահագործման ձեռնարկում և ցուցադրված էկրանին նշված է, որ մեկանգամյա սեթի բեռնաթափումից առաջ սպառողը պիտի.

1. Սեղմի չնեչով փակել բոլոր գծերը,
2. Անջատել արյան վերցման և վերադարձման գծերը արյան վերցման սարքից,

3. Համոզ
վել, որ բոլոր գծերը փակված են սեղմիչների միջոցով, իսկ հիվանդը
անջատված է

Բացի այդ, Բաքստեր ընկերությունը կթողարկի ծրագրային ապահովման նորացված
մեկնակերպը, որտեղ նախատեսված են հիվանդի անվտանգության լրացուցիչ
միջոցները: Լրացուցիչ ավտոմատացված թեստը թույլ կտա ապահովել սպառողի
կողմից արյան վերցման և վերադարձման գծերի փակումը: Այն դեպքում, երբ
հայտնաբերվի, որ գծերը փակված չեն, ապա բեռնաթափման հաջորդականությունը
դադարեցված կլինի և սպառողը կտեղեկացվի վթարային ազդանշանի սարքի միջոցով:

**Տեղեկատվություն և հրահանգներ սպառողների և բաշխողների համար**

1. Սպառողները կարող են շարունակել վերոհիշյալ «Prismaflex» բժշկական ապրանքների անվտանգ շահագործումը, հետևելով հրահանգներին, ներկայացված «Prismaflex»-ի շահագործման ձեռնարկում, և էկրանին ցուցադրված հրահանգներին, մեկանգամյա սեթը բեռնաթափելիս: Այն է՝ մեկանգամյա սեթը բեռնաթափելուց առաջ համոզվել, որ բոլոր գծերը փակված են սեղմիչների միջոցով, իսկ հիվանդը անջատված է:

2. Բաքստեր ընկերության սպասարկման ծառայության ներկայացուցիչը կկապնվի ձեր հիմնարկության հետ ուղղիչ պլանը կազմելու նպատակով, ինչպես նաև ծրագրային ապահովման նորացման ամսաթիվը և ժամանակը որոշելու նպատակով: Ձեր հիմնարկությունը անվճար կստանա Բաքստեր ընկերությունից ծրագրային ապահովման այդ նորացումը:

3. Լրացրեք կցված սպառողի պատասխանի ձևը և ուղարկեք այն Բաքստեր ընկերությանը ֆաքսով +7 (495) 647 68 08, կամ էլեկտրոնային փոստով (CIS_quality@baxter.com), կամ փոստով. "Բաքստեր» Ընկերութուն ՓԲԸ, 16Ա/1, Լենինգրադյան խճուղի, 5 հարկ, Մոսկվա, 125171, Ռուսաստան: Անհապաղ ուղարկելով սպառողի պատասխանի ձևը, դուք կհաստատեք սույն ծանուցման ստացումը և հետագայում չեք ստանա կրկնակի ծանուցում:

4. Խնդրում ենք Ձեզ ուղարկել սույն նամակի պատճեն բոլոր սպառողներին, որպեսզի բոլոր սպառողները տեղեկանան սույն հաղորդագրության մասին:

5. Եթե դուք կայանումեք դիլեր, մեծածախ վաճառող կամ դիստրիբյուտոր/առևտրային միջնորդ, տարածող տվյալ բժշկական ապրանքը այլ կազմակերպություններին, ապա տեղեկացրեք ձեր սպառողներին սույն հաղորդագրության մասին ըստ ձեր ընթացակարգերի:

**Լրացուցիչ տեղեկություններ և աջակցություն**

Ընդհանուր հարցերով, որոնք վերաբերում են այս հաղորդագրությանը, խնդրում ենք դիմել Բաքստեր ընկերություն երկուշաբթի-ուրբաթ ' 9:00-ից մինչեւ 18:00 մոսկվայի ժամանակով, կամ էլեկտրոնային փոստով. (ts_russia@baxter.com, CIS_quality@baxter.com) կամ +7 (495) 647 68 07 հեռախոսահամարով:

Նախապես ներողություն ենք խնդրում որևէ հնարավոր անհարմարությունների համար, որոնք դա կհասցնի Ձեզ կամ Ձեր անձնակազմին: Բաքստեր ընկերության կողմից ծրագրային ապահովման նորացումը նախատեսում է հիվանդի անվտանգության ապահովման լրացուցիչ միջոցառումների ներդրումը: Բաքստեր ընկերությունը անշեղորեն ձգտում է ապահովել մեր արտադրանքի և ծառայությունների համապատասխանությունը բարձրագույն որակի և անվտանգության չափանիշներին մեր հիվանդների և բժիշկների համար:

Հայաստանի Հանրապետության Առողջապահության Նախարարությունը տեղեկացվել է «Prismaflex» բժշկական ապրանքի նկատմամբ այս ուղղիչ գործողության մասին:

Հարգանքներով՝
Նատալյա Ռիբալկո
Ռուսաստանում և ԱՊՀ երկրներում որակի ապահովման ավագ մենեջեր
“Բաքստեր» Ընկերութուն ՓԲԸ

Հավելում. Սպառողի պատասխանի ձևը 1-ին էջում:

*Հավելում. Սպառողի պատասխանի ձևը*

*ՇՏԱՊ ՆԱՄԱԿ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՍԻՆ, ԹՎԱԳՐՎԱԾ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 07*

**Բժշկական ապրանք. Prismaflex**

**Ապրանքի անվանումը.** Prismaflex 7.XX,
**Ապրանքի ծածկագիրը.** 114870
**Սերիական համարը.**PA17262

| |
|---|
| Խնդրում ենք լրացնել այս ձևը և կազմակերպությունից մեկ օրինակը հետ ուղարկել ֆաքսով +7(495) 647 68 08, կամ էլեկտրոնային փոստով CIS_quality@baxter.com հաացեյով ձեր կողմից սույն ծանուցումը ստանալու փաստի հաստատման նպատակով: ֆաքսի տիտղոսաթերթը չի պահանջվում: |

## Հաստատում սպառողից

☐ Մենք հաստատում ենք, որ ստացել ենք վերը նշված նամակը, նրա բովանդակությունը մեզ համար հասկանալի է, և մենք հասցրել ենք այդ տեղեկատվությունը մեր անձնակազմին, այլ ծառայություններին և հիմնարկություններին:

☐ Մենք հաստատում ենք, որ ստացել ենք վերը նշված նամակը, նրա բովանդակությունը մեզ համար հասկանալի է, և մենք հասցրել ենք այդ տեղեկատվությունը մեր սպառողներին:

| | |
|---|---|
| Հիմնարկության անվանումը ր հասցեն.<br>*(Խնդրում ենք ներտպել)* | |
| Արտադրանքի ծածկագիրը և սերիական համարը<br>ապրքավորման | |
| Հաստատման ձևը լրացրեց՝<br>*(Խնդրում ենք ներտպել ԱԱՀ)* | |
| Պաշտոնը՝<br>*(Խնդրում ենք ներտպել)* | |
| E-mail և (կամ) հեռախոսայամարը<br>(Ներարյալ տարածքային կոդը)՝ | |
| **Ստորագրությունը/ամսաթիվը**<br>*ՊԱՐՏԱԴԻՐ ԼՐԱՑՎՈՂ ԴԱՇՏ* | ______________________/____/_____ |

*Սույն փաստաթուղթը ռուսերենից հայերեն թարգմանել եմ ես՝ թարգմանիչ Գոհար Հարությունի Հարությունյանս:*

FA-2017-002 -hg

ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ * ОГРН 1047796681866 * МОСКВА *
"АДВЕНТ ТРАНСЛЭЙШН"
ADVENT TRANSLATION

Переведено верно
True translation to the original

Бюро переводов «Адвент Транслэйшн»
Advent Translation Co, Ltd